

բակալուած եւ թխարան զրկուած էին, աւելի ճիշդ՝ բաղնիք զրկուած էին, ուր անոնք ազատ էին իրենց կուսակիցները տեսնելու եւ պատարազ ընելու: Եփրեմ եպիսկոպոս իր ճարտասանութեան համար պատրիարքական Պէրաքը ստանալու շատ մօտ էր, բայց հարկ եղած դրամը չունէր, որ ընտրութեան համար հարկաւոր քուէներուն մեծ մասը գնէր, (որովհետեւ պատրիարքութիւնը յոյներուն չափ հայոց մօտ ալ վաճառելի եղած է): Ատոր մէջ Աւետիք վարդապետէն նուազ կարողութեամբ դուրս եկաւ: (Աւետիք) հայկական իրաւանց հաւատարիմ պաշտպան նկատուած էր, թէեւ կ'ըսուէր թէ շատ բարակին շէր նայեր, երբ հակառակորդ կուսակցութեանէն քանի մը քսակ ստանալու հարկ կ'ըլլար, որուն փոխարէն կը խոստանար պատրիարք ըլլալուն քարոզիչները անհանդիստ չընել իրենց կաթողիկ հաւատքին ծաւալման գործին համար: Ինչ որ ալ ըլլայ, ան (Աւետիք) ընտրուեցաւ եւ Պէրաքը ստացաւ, եւ քիչ յետոյ նախորդէն աւելի եռանդուն հակակաթողիկ յայտարարեց ինքզինքը ի մեծ յուսախարութիւն քարոզիչներուն, որոնց համար իր անհաւատարմութեան գինը սուղ կերպով վճարեց, ինչպէս որ յետոյ պիտի յուշագրեմ»:

(1702) ի Մարտի սկիզբը, երեք հարիւր հայ կաթողիկներ, էրզրումի Յիսուսեաններուն աշակերտները, ամբաստանուած ըլլալով հակառակորդ կուսակցութեան անդամներէն իրենց հանդէպ վատ վերաբերման համար, հակաճառութեանէ ծեծկուռքի անցան: Եւ Դուռը, նկատի առնելով գանդատները, տեղուոյն փաշային կը հրամայէ Յիսուսեաններուն գոլէճին դռները դոցել: Ուրիշ հրամանով մըն ալ Անատոլուի Պէյլէրպէյ Ղալայնի Ահմէտ փաշային, որ Տրապիզոն կը բնակէր, կը պատուիրէ նախորդ հրամանին գործադրութեան վրայ հսկել, ինչ որ կատարուեցաւ, եւ Յիսուսեանները էրզրումէն

վտարուեցան, ոմանք Պարսկաստան, ոմանք ալ Կ. Պոլիս գացին» 22):

Նախ՝ հոս բացատրեմ, որ գարափափագ, կամ սեւ քահանայ, Յիսուսեաններուն տրուած ածական մըն էր այն ատեն:

Մօթըրէյ քիչ մը տարբեր կը պատմէ դէպքերը: Սակայն, իրեն կը պարտինք մանրամասնութիւններ, որոնք այլուր կը պակսին մեզի: Շահեկան է աւանդուած խօսակցութիւնը, որ կարծես ականջալուր կաննատեսէ մը կը պատմուի: Ամէն պարազայի տակ, երբ Մելքիսեղեկ Սուպհի, Եփրեմի գանդատին վրայ, պատրիարքութեանէ ինկաւ եւ թխարան զրկուեցաւ, ըստ Մօթըրէյի՝ Սուպհին իրապէս բաղնիք մը զրկեցին՝ կ'երեւայ թէ իր կուսակիցներուն հետ անոր կրակարանին վրայ աշխատելու համար իբր «ֆիլիսաֆին», այսինքն՝ մոխիր հանող եւ կրակին փայտ հայթայթող: Սուպհի եւ իրենները դեռ հոն կը վայելէին որոշ կրօնական ազատութիւններ եւ թոյլատրուած էին իրենցիններուն հետ տեսնուիլ, — բան մը որուն մասին սակայն Օրմանեանի ծանօթութիւն կը պակսի:

Յետոյ, Սուպհիի անկումէն յետոյ, անոր տեղը Աւետիքը շանցաւ, ինչպէս որ կը գրէ մեր ուղեգիրը, այլ «պատրիարքութեան կոչուեցաւ Եփրեմ Ղափանցին 1701 Սեպտեմբեր 1-ին»: (Ազգապատում, 2700—2701): Այսուհանդերձ Եփրեմ մընաց Ազրինապոլիս, ուր կը գտնուէր այն ատեն Օսմանեան արքունիքը եւ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը կառավարել ջանաց փոխանորդով մը, իր տեղ Կ. Պոլսոյ պատրիարքարանին մէջ նշանակուած: Աւետիք Եւզոկիացի Եփրեմի տեղ պատրիարքութեան դահը բարձրացաւ Փետրուար 24-ին (նոր տոմար՝ Մարտ 7) 1702-ին:

Կարնոյ Յիսուսեան գոլէճին փակուելը եւ Յիսուսեաններուն վտարուելը

22) Անդ՝ էջ 220—222: